

Մեկ գոնեանցի Սիրելի եղբայրներս եւ Քոյրերս,
եւ Բոլորդ,

Նախքան փոքր խօսքերուս սկսելու, բոլորդ ալ ինչպէս մեր
նախանցեալ հանդիպումին մէկ վայրկեաննոց յարգանքի
տուրքի կը հրաւիրեմ մեզմէ յաւետ բաժնուած մեր
ընկերներուն, մեր ուսուցիչներուն, մեր բարերարներուն եւ
վերջերս կորսնցուցած մեր արժեքաւոր ուսուցիչներէն՝
Պարոն Սեպուհ Աբգարեանին, Պարոն Սարգիս Յամպոյեանին եւ
մեր շատ սիրելի ուսուցիչ Պարոն Չիզմէճեանին զաւկին՝
Արային մահուան առիթով:

Մէկ վայրկեան յոտնկայ սլրու թիւն:

Իմ ամփոխարինելի ընկերներս, ընկերուհիներս եւ սիրելի
հարազատՄեկ գոնեանցի մօտաւորներս,

Երագի մը պէս դարձեալ անցան այս եօթը օրերը: Իրենց անուշ
եւ յիշատակելի պահերով, որոնք մեր մտքերուն մէջ պիտի մնան
այնպէս, ինչպէս որ ասրեցանք: Ձեզմէ ամէն մէկը ճաւահիր մըն
է ինծի համար, ինչպէս բանաստեղծը կ'ըսէ եւ ես այս
հանդիպումը կ'ուզեմ կոչել «Կարօտի հանդիպման յագեցման
վայրկեաններ»:

Գիտեմ, որ անդարձ կորան այն տարիները, ուր մենք պարման եւ
պարմանուհի ասրեցանք մեր լաւագոյն տարիները: Փառք
Աստուծոյ, որ դարձեալ միասին ենք: Մեր անցեալ
հանդիպումին վերջին գիշերը, լուսահոգի Պարոն
Յամպոյեանին ձեռք բռնած աղօթած էի, որ մեզմէ ոեւէ մէկը
պակաս չըլլայ մեր յաջորդ հանդիպումին: Սակայն
դժբախտաբար երեք մեծ կորուստներ ունեցանք: Այդ ալ
անշուշտ Աստուծոյ կամքն է:

Քիչ առաջ վերը ըսի. «Կարօտի հանդիպում»: Ինչերո՞ւ էր այս
կարօտը: Կարօտը կը սկսէր Մեկ գոնեանի մուտքէն մինչեւ
հիւանդանոցին ելքը, ջրամբարի սկիզբէն մինչեւ ագարակը:
Սրահները, կածանները, ճամբարները, դասարանները, դպրոցը,
մեր ուսուցիչները եւ դուք: Ձեզմէ ամէն մէկը, իր բարձր

յատկութիւններով կը մնայ սրտիս մէջ եւ ես նողկանք կը գգամ այն մարդոց, որոնք մեր դպրոցը այս վիճակի բերին: Եւ կը հիանամ այն ընկերներու սվրայ եւ ձեր վրայ, որոնք տակաւին իրենց յոյսը չեն կտրած Մելգոնեանի բացուելուն: Յառաջ Աստուած, օր մը, այդ ալ պիտի տեսնենք:

Քիչ առաջ ըսի, ձեր յատկութիւնները, որոնցմով ամէնքդ ալ կը մնաք սրտիս եւ մտքիս մէջ: Ովսաննային դայլայլը, Քաչուհիին հոյակապ ձիգ կեցուածքը, Մանուկին ֆուդպօլի մեծ արժանիքը, Գեորգին հայրիկի մը պէս գիրկխառնումը, Խաչիկին լրջախոհ մտածումները, Երանին հոյակապ հայերէնը, Արային ճշունդիւնները, Վահէին «Ես հարուստ եմ, ես բախտաւոր» կեցուածքը, Միսակին ծեկծեքուն կերպը եւ ձեզմէ ամէն մէկուն տարբեր յատկութիւնները, որոնք ինչպէս ըսի կը մնան մտքիս մէջ թարմ ու կանաչ:

Մելգոնեանը փակողներուն նողկանք կը գգամ ըսի, որովհետեւ այդ դպրոցին ճիշդ հիմա է, որ պէտք ունինք միջին արեւելքի այս քան դժնդակ տարիներուն, ուր մենք հայերս դարձեալ կ'ապրինք դժուարագին օրեր: Դպրոցը անցեալին, հայ ժողովուրդին՝ սփիւռք եւ Հայաստան, տուաւ իր գաւակներէն լաւագոյնները ու բարին, որոնք մինչեւ հիմա գործեցին «Հայը Հայով Հայուն Համար» գաղափարին ներքեւ, եւ վստահ եմ որ մեզմէ վերջ ալ պիտի գործեն նոյն նպատակով: Մելգոնեանը առանձին գագաթ մըն է աշխարհի մէջ, ուր ամէն հայ պէտք է իր լաւագոյն գործունէութիւնը բերէ, գայն դարձեալ կեանքի բերելու համար:

Մելգոնեանը կը սիրեմ, աշխարհն ալ կը սիրեմ, քանի Մելգոնեանը անոր մէջն է:

Ձեր բոլորին բարի ճանապարհ կը մաղթեմ եւ կը յուսամ, որ շատ աւելի շուտ իրարու քով գանք, քանի կեանքի առանցքը եւ օղակը կը սկսի նեղանալ մեզի համար: Ես արդէն իսկ 69 տարեկան եւ

ձեզմե ամեն մեկը գիտեմ, որ այդ տարիքի շուրջ էք: Բոլորիդ
ալ բարձր, արեւոտեւ լուսաւ որ ճակատներէն կը համբուրեմ եւ
բարի վերադարձ կը մաղթեմ: Ասիկա մնաք բարովի խօսք մը չէ,
այլ վերադարձի եւ կարօտի հանդիպման նոր հանգրուան մը կը
մաղթեմ:

Ես այսօր, այս խօսքերովս բացումը ըրի, ես ձեզի համար պիտի
երգեմ, պիտի արտասանեմ, քանի մը անուշ Մելգոնեանի
յիշատակներ պիտի պատմեմ եւ դուք ալ պիտի խնդրէի որ,
պատրաստուիք ձեր յիշատակներէն գոնէ մեկական հատը հոս
պատմել, որոնք անցած են անցեալի Մելգոնեանի մէջ:

Կեցցէ՛ դպրոցս, կեցցէ՛ Մելգոնեան Կրթական
Յաստատութիւնը, եւ յաւետապրում մեր սիրելի կրթական
հաստատութեան:

- Միսաք Մեծարեւոյց - Կիրակմուտք
- Միսաք Մեծարեւոյց - Յիւզը
- Պետրոս Դուրեան - Տրտոււնք եւ Չղջում
- Պետրոս Դուրեան - Լճակ
- Դանիէլ Վարուժան - Մշակ
- Սիամանթօ - Ափմը մոխիր հայրենի տուն եւ Սեղանիս վրայ
- Վահան Թէքեան - Եկեղեցին հայկական եւ Քուանունդ
- Մատթէոս Չարիֆեան - Վայրի ճաղիկ
- Օմար Խայամ - Իմ վառ գինու

Բանուորուհին Դանիէլ Վարուժան

Պատու հանիս տակէն, ամեն առաւօտ,
Ուրուականի պէս կ'անցնիս.
Եւ կուսագեղ գըլու խիդ վրայ կ'արտասուէ
Տերևաթափ վարդենիս:

Իսկ պիտի երգեմ՝ Տլէ Եամանը:

